ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀՌՈՄԻ ԴԷՄ

Գրեց՝ Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

Դ.

ՄԵԾՆ ՏԻԳՐԱՆ ԵՒ ՓՈՔՐ ԱՍԻՈՑ ԲԱԽՏԸ

ՏԱՐԱԲԱԽՏԱԲԱՐ, Հայաստանի եւ Հռոմի այս առաջին կռիւների իրական եւ ճշգրիտ ընոյթն ու նկարագիրը՝ մեզ պակասում է: Մեր ազգային պատմիչները, նոյնիսկ Խորենացին կամ համր են կամ շատ հակիրճ ու խառնակ: Յոյն եւ հռոմայեցի պատմիչները՝ աչառու են եւ յաճախ անծանօթ Արեւելքի անցուդարձերին եւ ինքնայատուկ պայմաններին: Նրանց պատմածները մեծ մասամբ յարմարեցուցած են իրենց երկրի շահերին եւ ձգտումներին:

Մասնաւորապէս Պլուտարքոս, որ ամենից շատ է գրում Տիգրանի շրջանի մասին, բացայայտապէս կողմնակալ է եւ պէտք ունի զգուշաւոր եւ հիմնական քննադատութեան: Նրա պատմութիւնը շատ տեղ կասկածելի է եւ երբեմն էլ յերիւրած առասպել: Մասնաւորապէս այն տեսարանը, ուր իբր թէ Տիգրան Մեծ պարտուած՝ Պոմպէոսի կայանն է գնում եւ հռոմայեցի զօրավարի ոտների առջեւ դնում իր թագը, այն էլ իր ըմբոստացած որդու՝ Տիգրան Կրտսերի ներկայութեան: Այս բոլորը մեզ թւում է ճշմարտութիւնից հեռու՝ պարզ հեքեաթ: Նոյնը կարելի է ասել եւ Միհրդատի ու Տիգրանի հանդիպումի մասին, վերջինիս պարտութիւնից յետոյ: Պլուտարքոսի գրչի տակ Տիգրան ե՛ւ փոքրոգի է ե՛ւ անարի, ազնուական զգացումներից զուրկ, մինչդեռ Միհրդատ կարեկից է, առաքինի ու ազնիւ:

Տիգրանի բարոյական անձնաւորութիւնը շատ էլ պարզուած չէ: Բայց, անկասկած է, որ նա լաւ պիտի ճանաչէր հռոմայեցիներին Միհրդատի կռիւներով եւ անշուշտ հաղորդակից եւ սիրող էր արեւմտեան քաղաքակրթութեան: Հայաստանի նոր մայրաքաղաքի՝ Տիգրանակերտի կառուցումն իսկ ապացոյց է հայ արքայի բարձր ճաշակին, քաղաքակրթական ձգտումներին ու քաղաքական իմաստութեան: Այս շքեղ ոստանը, որ Տիգրանի կամքով ասես ժայթքեց գետնից, իրօք մի հրաշակերտ էր, որ միացնում էր իր մէջ Արեւելքի եւ Արեւմուտքի բոլոր պերճութիւնն ու արուեստը: Յոյն քանդակագործներ կանչուեցին քաղաքը զարդարելու ու թատրոնը հաղիւ շինուած, աւարտած յոյն դերասաններ հրաւիրուեցին խաղալու հելլէնական լաւագոյն երկերը: Բազմաթիւ արձաններ եւ արուեստի այլ գլուխ-գործոցներ Տիգրան յոյն քաղաքներից Տիգրանակերտ փոխադրեց՝ իր մայրաքաղաքը գեղեցկացնելու համար: Արդէն իսկ, իր արքունիքում իշխում էր յունո-հռոմէական քաղաքակրթութիւնը: Ամէնքը խօսում էին ու գրում յոյն լեզուով եւ իր որդին ու դահաժառանգը՝ Արտաւազդ, նոյնիսկ յունարէն լեզուով ողբերգութիւններ եւ ճառեր էր գրում, որոնց մասին անգամ Պլուտարքոս գովեստով է խօսում:

Տիգրանակերտը միակը չէր: Բազմաթիւ այլ քաղաքներ Մեծ արքայի հրամանով բարձրանում էին հայոց աշխարհի զանազան մասերում, առեւտրական կամ քաղաքական նպատակներով: Ամբողջ գաւառներ էին տեղահան լինում եւ ուրիշ տեղ հաստատւում: Անգամ վաչկատուն արաբները Տիգրանի հրամանով թողնում էին իրենց բարբարոս կենցաղը եւ նստակեցութեան վարժւում առեւտրի եւ քաղաքակրթութեան համար:

Չնայած իր բազմաթիւ պատերազմներին, այս մեծ թագաւորը այսպիսով ժամանակ էր գտնում իր հսկայ կայսրութեան բազմազան ցեղերին քաղաքակրթական ճամբին դնել: Ամբողջ երկիրը, ասես, մի կախարդական ձեռքով եռուզեռի մէջ էր ստեղծագործելու եւ շէնցնելու համար: Հպատակ ազգերը վերջապէս խաղաղութիւն էին գտել Մեծ Միապետի իշխանութեան տակ: Դադար էին առել մանրմունր ցեղերի եւ իշխանների փոխադարձ ապիւնահեղութիւնները: Միշտ թշուառ եւ ալե-